

Լ Ե Ջ Վ Ի Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ ՈՒ Մ

Հայկական ՍՍՈՒ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտը 1961 թվականին իր գիտա-հետազոտական գործունեությունը վարել է հետևյալ շորս հիմնական պրոբլեմների ուղղությամբ:

ա. Ժամանակակից հայերենի կառուցվածքի ուսումնասիրությունը:

բ. Հայոց լեզվի պատմության և բարբառագիտության մշակման հարցերը:

գ. Բառարանագրությունը:

դ. Հայոց լեզվի համարարառ ու ընտրովի բարտարան ստեղծելը:

Առաջին պրոբլեմը, որ իրականացնում է ժամանակակից հայերենի սեկտորը, նպատակ ունի համակողմանիորեն ուսումնասիրել ժամանակակից հայերենի կառուցվածքը:

Ուսումնասիրված են արդի հայերենի հնչյունաբանությունը, բառագիտությունը, ձևաբանության և շարահյուսության հիմնական հարցերը, որոնց վերաբերյալ հրատարակվել կամ արդեն պատրաստ են հրատարակության առանձին մենագրական ուսումնասիրություններ, որոնք ընկած են լինելու «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր աշխատության հիմքում:

Անցած տարում ավարտվել են «Հայոց լեզվի շարահյուսության» 2-րդ հատորը, «Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում» և «Հայ գրողները լեզվի ու ոճի մասին» աշխատությունները:

Ընթացիկ մեջ են մի շարք հետազոտական թեմաներ, ինչպես՝ «Լեզվի բառային կազմի, ձևաբանական կառուցվածքի և շարահյուսական կառուցվածքի փոխհարաբերությունները», «Որոշիչ և հատկացուցիչ ժամանակակից հայերենում», «Ժամանակակից հայերենի ձայնորդների փորձառական ուսումնասիրությունը», «Սովետահայ մամուլի լեզուն և ոճը» և այլն:

Հայոց լեզվի պատմության և բարբառագիտության սեկտորի հիմնական պրոբլեմն է՝ մի կողմից մշակել հայ գրական լեզվի պատմության ուսումնասիրության հարցերը, որոնց մեջ առանձնակի տեղ ունեն «Արևելահայ գրական լեզվի պատմությունը», «Արևմտահայ աշխարհաբարի կազմավորումը», «Հունարան դպրոցի ղեկը հայերենի բերականական տերմինաբանու-

թյան ստեղծման գործում» և այլն, և մյուս կողմից՝ առանձին բարբառների մենագրական ուսումնասիրություններն ու բարբառագիտական բարեփոխումները:

Անցած տարում ավարտվել և պատրաստ են քննարկման «Գեսարիայի շրջանի բարբառագիտական քարտեզը» և «Արովյանի շրջանի բարբառագիտական քարտեզը» աշխատանքները, որոնք կազմվել են գյուղերի խոսվածքների հնչյունաբանական և ձևաբանական հատկանիշների հիման վրա: Ուսումնասիրված բարբառներն ու խոսվածքները խմբավորված են, հավաքված են նմուշներ, վիճակագրական ու պատմական տվյալներ: Այս ուղղությամբ կատարվող ուսումնասիրություններից ընթացիկ մեջ են «Սվեդիայի բարբառագիտական քարտեզը» և «Մեղրու շրջանի բարբառագիտական քարտեզը» թեմաները, կազմվել են կազմավորողի բարբառի հնչյունաբանությունն ու ձևաբանությունը, Անտիոքի շրջանի լիակատար համեմատական բառարանը, հետազոտվում ու վեր են հանվում այդ շրջանների բարբառների ու խոսվածքների առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Ավարտին մոտ է Ղարաբաղի բարբառի մեծածավալ տեքստուալ բառարանը, շարունակվում է «Մալաթիայի բարբառը» մենագրական ուսումնասիրության աշխատանքը:

Ինստիտուտի բառարանագրության սեկտորը անցած տարում պատրաստել է երկու խոշոր բառարաններ, որոնցից մեկը կրում է «Լեզվաբանական բառարան» անունը, իսկ մյուսը՝ «Հայերենի հոմանիշների բառարան» խորագրով:

Սրանցից առաջինի հիմնական նպատակն է հավաքել, խմբավորել, գնահատել ու բացատրել հայ լեզվաբանական գրականության մեջ առկա տերմինները, ինչպես նաև տալ այդ տերմինների համարժեք թարգմանությունները ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով, իսկ շատ տարածված տերմինների համար նաև լատիներեն և հունարեն:

Գիտական ու գործնական կարևոր նշանակություն ունի «Հոմանիշների բառարանը», որի մեջ ընդգրկված են հին և միջին հայերենի, արդի հայերենի (արևելահայ և արևմտահայ տար-

բերականերով հանդերձ), բարրառների ու խոս-վածքների շուրջ 70 հազար հոմանիշ բառեր, որոնք քաղված են հայ գեղարվեստական և գիտատեխնիկական գրականությունից, մամուլից, հայերենի տարրերը բնույթի բառարաններից, այլև թարգմանական և տեղիական բառարաններից:

Հիմնականում ավարտվել է արդի հայերենի բառահատոր բացատրական բառարանի առաջին հատորի կազմման աշխատանքը, հրատարակվել է փորձնական պրակը և դրվել լայն հասարակայնության քննարկման: Փորձնական պրակի քննարկումից հետո և նրա տված արդյունքների համեմատ բառարանը կվերախմբագրվի և կհանձնվի հրատարակության:

Բառարանագրության սեկտորում մշակվում են «Հայ բառարանագրության պատմությունը» և «Հ. Թումանյանի երկերի բառարանը թեմաներով»:

Շատ դանդաղ է ընթանում Հայ-ռուսերեն բառարան կազմելու աշխատանքը, որի պատճառը, մեր կարծիքով, մի կողմից բարձրորակ համապատասխան կադրերի պակասն է, իսկ մյուս կողմից՝ գիտությունների կողմից ընդունված այն սկզբունքը, որի համաձայն բառարանը պետք է հիմնովին վերակազմվի՝ այն համաձայնեցնելով «Արդի հայերենի բացատրական բառարան» հետ՝ օգտագործելով նրա բառապաշարը, բառակապակցությունները, իմաստների որոշումը, անհրաժեշտ օրինակները և այլն:

Քարտարանում կազմվել են Աղաթանգեղոսի, Եղիշի, Կորյունի, Բուդանյի, Խորենացու, Շապուհ Բաղրատունու բառացանկերը, ինչպես նաև հայ գրականության խոշորագույն ներկայացուցիչներ Բաճիկի (1—10 հհ.), Ավ. Խաչակյանի (1—2 հհ.), Մուրացանի (1, 2, 4, 5 հհ.) և Շիրվանզադեի (1 հ.) բառացանկերը:

Անհրաժեշտ է նշել, որ ինստիտուտը գրեթե չի ունի ավարտել է հին և նոր գրականության կարևորագույն երկերի քարտագրման գործը: Այժմ աշխատանքները հիմնականում տարվում են կատարածի ամբողջականացման, մշակման և ամփոփման ուղղությամբ:

Քարտարանը լիարժեք կդառնա և հայագիտական, բանասիրական բազմապիսի ուսումնասիրությունների անսպառ աղբյուր կհանդիսանա այն ժամանակ, երբ ձեռնարկված միջոցառումները վերջնականապես կկատարվեն ճշտվելու անթերի:

* * *

1961 թ. տպագրության են հանձնվել՝ «Լիակատար քերականություն հայոց լեզվի» (Հր.

Աճառյան), «Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր» (Ս. Արրահամյան), «Մտորդասական կապակցությունը ժամանակակից հայերենի բարդ նախադասություններում» (Ն. Պառնասյան), «Հայերենի ձայնավորների փորձառական ուսումնասիրությունը» (Ա. Արամյան):

Բացի դրանից, Լեզվի ինստիտուտի հրատարակությամբ (ապակետիպ) լույս են տեսել «Կոզնիկի բարբառը» (Խ. Բաղրատյան) և «Կեսաբիայի բարբառը» (Ս. Անթոնյան) աշխատությունները:

Պատրաստ են հրատարակության՝ «Հայերենի շարահյուսության» 2-րդ հատորը (Լ. Առաքելյան), «Բայր ժամանակակից հայերենում» (Ա. Արրահամյան), «Ժամանակակից հայերենի շաղկապները» (Գ. Գրեգորյան), «Ժամանակակից հայերենի անշաղկապ բարդ նախադասությունները» (Ն. Պառնասյան), «Հաղորդի բարբառը» (Ա. Պողոսյան), «Ժամանակակից հայերենի բայի անցյալի ժամանակների նշանակությունն ու կիրառությունները» (Ս. Զարրեյան):

Շարագրվածից, բնականաբար, լպետք է ենթադրել, թե ինստիտուտում ամեն ինչ հարթ է ու կարգի: Լեզվի ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքներում ղեկավար կան լուրջ դժվարություններ և թերություններ:

Գլխավոր թերություններից մեկը, մեր կարծիքով, ընդհանուր լեզվաբանական տեսական պրոբլեմների մշակման հարցերի բացակայությունն է, որի միջոցով աշխատանքի պակասը և այլն: Մեր պլաններում ղեկավար առկա են երկրորդական նշանակություն ունեցող նեղ թեմաներ, այլև այնպիսիք, որոնց մշակումը ազատորեն կարելի է ժամանակավորապես հետաձգել, ինչպես, օրինակ, որևէ, մանավանդ ոչ շատ հայտնի մի բարբառի հսկայական տեքստուալ բառարանի կազմումը և այլն. եթե նկատի առնենք նաև այն, որ այդպիսի աշխատանքներից օգտվողները չափազանց քիչ են, մինչև զրոյից ցածր: Հնդկների և սովետահայ խոշորագույն գրողների լեզվի և ոճի ուսումնասիրության հարցերը ղեկավար պատշաճ տեղ չունեն մեր ընթացիկ պլաններում:

Ինստիտուտի առաջ ծառացած հրատապ խնդիրներից մեկն էլ պետք է լինի մասսայական դպրոցներին գիտա-մեթոդական օգնություն ցույց տալու հարցը՝ կապված դպրոցը կյանքին մոտեցնելու մեր պարտիայի կենտրոնական կոմիտեի որոշումների ու կառավարության՝ դպրոցի մասին կայացրած հայտնի օրենքի հետ:

Ս. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ